Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-21-Ը ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՐԱՎՅԱՆ-ՍԻԼԵԶՅԱՆ ԵՐԿՐԱՄԱՍ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Էդվարդ Հովհաննիսյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Չեխիայի Հանրապետություն, Մորավյան-Սիլեզյան երկրամաս,
2023 թվականի սեպտեմբերի 19-ից 21-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյան երկրամասի ղեկավար Յան Կրկոշկայից ստացված հրավեր (հրավեր՝ 2023 թվականի հուլիսի 12):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

ՀՀ Արմավիրի մարզի և Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյան երկրամասի միջև 2014 թվականի հունվարի 31-ին ստորագրված փոխըմբռնման հուշագրով նախանշված ոլորտներում համագործակցության ակտիվացում, երկկողմ կապերի սերտացում և առարկայական համագործակցություն, ինչպես նաև հայ-չեխական մարզային համագործակցության հաստատման և հետագա զարգացման հարցերի քննարկում, նոր կապերի, ծանոթությունների հաստատում, այցելության օրակարգով նախատեսված միջոցառումներին, ճանաչողական այցելություններին ՀՀ Արմավիրի մարզի պատվիրակության մասնակցություն, փորձի փոխանակում:

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի և Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյան երկրամասի Օստրավա քաղաքի միջև համագործակցության ձևավորում:

5. **Քննարկված թեմաները.**

Օրակարգով նախատեսված բոլոր հանդիպումների ընթացքում ոլորտներին վերաբերող իրավիճակի ներկայացում, փորձի փոխանակում, մարզային և համայնքային մակարդակներում փոխհամագործակցության ոլորտների ուղղությամբ իրականացվելիք քայլերի և գործողությունների քննարկում:

Զրույցի ընթացքում երկուստեք կարևորվել է երկու մարզերի բարեկամական հարաբերությունների հետագա սերտացումը և լավագույն փորձի փոխանակումը:

Քննարկման ընթացքում շեշտվել է մշակույթի, կրթության, գյուղատնտեսության, առևտրատնտեսական համագործակցության և այլ ոլորտներում առկա մեծ փոխգործակցային ներուժի իրականացման անհրաժեշտությունը:

Հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել արդյունավետ աշխատանքային շփումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

2023 թվականի սեպտեմբերի 18-21-ը Արմավիրի մարզի պատվիրակությունը մասնակցել է օրակարգի հագեցած գրաֆիկով նախատեսված բոլոր հանդիպումներին, միջոցառումներին: Մասնավորապես՝

2023թ. սեպտեմբերի 18-ին պատվիրակությունը ժամանել է Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյան երկրամասի Օստրավա քաղաք՝ մարզպետի գրասենյակի վարչության աշխատակից Ջ. Բոնեշի ուղեկցությամբ: Պատվիրակությունը տեղափոխվել է մարզային իշխանության շենք, հանդիպել են երկրամասի ղեկավար Յան Կրկոսկու և երկրամասի պետական պաշտոնյաների հետ:

Երկուստեք ներկայացվել են մարզերի հնարավորությունները, հետաքրքրություն առաջացնող ոլորտները:

Շրջայց է կատարվել մարզային իշխանության շենքում, որից հետո պատվիրակությունը այցելել է երկրամասի Ինտեգրված անվտանգության կենտրոն, որտեղ հրշեջ բրիգադի տարածաշրջանային տնօրեն Ռ. Կուչարը ներկայացրել է անվտանգության կենտրոնի կառուցվածքը, այնուհետև իրականացվել է շրջայց կենտրոնում, զրուցել են աշխատակիցների հետ:

Սեպտեմբերի 19-ին պատվիրականությունն այցելել է բեռնատար մեքենաների արտադրությամբ զբաղվող չեխական Tatra Trucks ընկերություն, ծանոթացել արտադրամասի պատմությանը, բեռնատար մեքենաների հնարավորություններին և այլն: Շրջայց է կատարվել Tatra բեռնատարների թանգարանում և արտադրամասում:

Այնուհետև սեպտեմբերի 21-ին այցելել է «Մառլենկա Ինթերնեշընլ» ընկերություն և հանդիպել ընկերության հիմնադիր, մեր հայրենակից Գևորգ Ավետիսյանի և Չեխիայի Մորավյան-Սիլեզյան երկրամասի գործարարների հետ:

Կազմակերպված ընդունելության շրջանակներում ողջույնի խոսքով հանդես են եկել Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, Չեխիայի Հանրապետությունում ՀՀ դեսպան Աշոտ Հովակիմյանը, Մորավյան-Սիլեզյան երկրամասի ղեկավար Յան Կրկոշկան և չեխ գործարարները: Շրջայց է կատարվել նաև «Մառլենկայի» և Գարեջրի գգործարաններում, ներկայացվել են գործարանների արտադրական հնարավորությունները, վերջում տեղի է ունեցել մեղրով տորթերի և գարեջրի համտես:

Պատվիրակությունն այցելել է Ֆրիդեկ-Միստեկի ամրոց, շրջայց է կատարվել ամրոցի այգում, թանգարանում, ծանոթացել պատմամշակութային հարուստ ժառանգությանը:

Բոլոր հանդիպումները հագեցած են եղել փոխհամագործակցության ոլորտների ուղղությամբ իրականացվելիք գործողությունների, ինչպես նաև հնարավոր ծրագրային առաջարկների ներկայացման շուրջ ակտիվ քննարկումներով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ձեռք են բերվել համաձայնություններ, պայմանավորվածություններ, այդ թվում առևտրատնտեսական համագործակցության ոլորտում: Այցի շրջանակներում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ՝ բարձրագույն ղեկավարության հետ, ինչպես նաև գործարարների հետ:

Առևտրաարդյունաբերական պալատի տնօրեն Ջ. Սկիպալայի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ մարզի գինեգործությամբ զբաղվող ընկերությունների կողմից առաջարկները ներկայացնելու նպատակով:

Ակնկալվում է այցի արդյունքում ՀՀ Արմավիրի մարզի և Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյան երկրամասի միջև մի շարք ոլորտներում փոխշահավետ համագործակցություն սկսելու, ինչպես նաև համայնքային մակարդակում ևս համագործակցություն հաստատելու ուղղությամբ:

Փոխադարձ այցերը նոր խթան կհանդիսանան Արմավիրի մարզի և Մորավյան-Սիլեզյան երկրամասի միջև հարաբերությունների շարունակական զարգացման համար և իր նպաստը կբերի բիզնեսի առևտրատնտեսական, մշակութային, բարձր տեխնոլոգիական և այլ ոլորտներում հայ -չեխական համագործակցության հետագա զարգացմանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների ժամանակ կարևորվել է մարզային և համայնքային մակարդակներում հաստատված համագործակցության զարգացումն ու ընդլայնումը՝ հուշագրերում նախանշված ոլորտներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հ. Հարությունյան, 25-09-2023թ.